

Ժողովրդական լուսատրութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջանների պ. պ. հոգաբարձուներին

(1903 թ. յունիսի 28-ին)

Վերջին ժամանակներս ժողովրդական լուսատրութեան մինիստրութեան մէջ սկսեցին աւելի յաճախ ստացուել զեկուցումներ ուսումնաշրջանային վարչութիւններից այնպիսի փաստերի վերաբերմամբ, որոնք վկայում են կարգապահութեան անկումը միջնակարգ դպրոցներում և մասամբ քաղաքային դպրոցներից մի քանիսների աշակերտների սանձարձակութեան, նոյնպէս և մտքի վնասակար ուղղութեան մասին, որ յաճախ նկատոււմ է բարձր դասարանների աշակերտների մէջ: Պատահել է, օրինակ, որ ամբողջ դասարանի աշակերտները հրաժարոււմ էին կատարել ուսումնարանական իշխանութեան կարգադրութիւնները և այդ ժամանակ գործում էին խմբովին. եղել են կոպիտ և յանդուգն վարմունքներ աշակերտների կողմից անբաւարար թւանշաններ, նկատողութիւններ կամ ներշնչումներ ստանալու առիթով ուսուցիչներից. եղել են զէպքեր, որ աշակերտները ուղղակի յարձակուել են մանկավարժական պերսոնալին պատկանող անձանց վրայ և վիրաւորանք են հասցրել նրանց՝ խփելով. վերջապէս ցուցմունքներ կան, որ բարձր դասարանների աշակերտների մէջ ընդարձակ չափերով հակակառավարչական պրոպագանդ է շարունակուում, որ ծնեցնում է ոչ-պակաս զոհեր մի այնքան անմիտ, որքան և յանցաւոր չարժման:

Այդ տեսակ տխուր փաստերի մասին մինիստրութեան մէջ ստացուող զեկուցումներից երևում են յաճախ ուսումնարանական վարչութեան և մանկավարժական խորհուրդների թուլութեան պարզ նշանները՝ մատնացոյց արուած չարիքի դէմ կռուելու գործում: Ստուգուած է ի միջի այլոց, որ ուսումնա-դաստիարակչական պերսոնալի անձինք համարեա ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում աշակերտների անքաղաքավարի ընթացքի վրայ փողոցներում և հասարակական տեղերում. իսկ եթէ մի դպրոցի ծառայողներից որեւէ մէկը նկատողութիւն է անում համապատասխան զէպքում մէկ ուրիշ դպրոցի աշակերտին, այն ժամանակ այդ վերջինի իշխանութիւնը այդպիսի գործողութիւնը ոչ թէ ցանկալի երախտագիտութեամբ է ընդունում, այլ

դժգոհութեամբ: Ամենահազադիւտ բացառութիւններով խորհրդ-
դակցութիւններ չեն կազմուած միննոյն քաղաքի մէջ գտնուող
միջնակարգ դպրոցները զիրեկտորներէ միջն՝ միասին քննելու
համար այն հարցերը, որոնք վերաբերում են աշակերտների ար-
տակարգ-դպրոցական ընթացքի վերահսկողութեանը: Կանոննե-
րը չեն բացատրուած աշակերտներին, և նրանց յամառ խախ-
տումը անպատիժ է մնում: Աշակերտները կարողացել են ըն-
տելանալ այն մտքին, որ աշկարայ ծխելը փողոցներում, հա-
զուտի ձեւ խախտումը, հոգաբարձուին, տեղական նահանգա-
պետին և մինչև անգամ գեներալ-նահանգապետին գլուխ չը
տալը այնպիսի չեղումներ են կանոնների պահանջներից, որ
թող է տալիս լուծեամբ ուսումնարանական իշխանութիւնը
յամենայն դէպս, սխտեմատիկաբար անպատիժ են մնում, ու-
րովհետև ուսումնարանական վարչութեան մէջ ծառայողները՝
կարծես վախենալով վերաւորանքներից՝ չեն համարձակուած
յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկել:

Այլևս տանելի չը համարելով իրերի այդպիսի դրութիւնը
և Արքայական կամքի, այն է՝ երիտասարդութեանը դպրոցում
սկզբնական տարիներից կարգի և դիսցիպլինայի ընտելացնելու
անշեղ պարտականութեան վրայ խստօրէն ուշադրութիւն հրա-
ւերելով այն մարդկանց, պարտք եմ համարում նկատել, որ
միջնակարգ դպրոցների իշխանութիւնների և մանկավարժական
խորհուրդների տրամադրութեան տակ բաւարար միջոցներ կան
ազդելու համար աշակերտների վրայ թէ՛ զանազան բնպրնսսիւ
միջոցներ գործադրելու մտքով նրանց վերաբերմամբ, որքան
այդպիսի միջոցները անհրաժեշտ կը համարուեն, նոյնպէս և
մանկավարժական ազդեցութեամբ դաստիարակչական ցանկալի
հետեանքներին հասնելու համար:

Որ բացառապէս պատժիչ միջոցներով չէ կարելի կանոնե-
ցնել դիսցիպլինայի անկումը, դա՛ ի հարկէ՝ անկասկած է:
Բայց այդ ամենին չէ նշանակում, որ դպրոցի ուսումնարա-
նական-դաստիարակչական օրգանները պէտք է իրանց թուլու-
թիւնը հասցնեն ուղղակի անհոգութեան: Ցաւելով պէտք է
խոստովանել, որ յաճախակի իրանց անտարբեր վերաբերմունքը
դէպի աշակերտների պախարակելի ընթացքը դպրոցական վար-
չութեան պատկանող անձինք բացատրում էին ոչնչով՝ չ'արդա-
րացնող ցուցմունքով Թագաւոր Կայսրի ամբողջ առաջ հասա-
րակութեան համար յիշատակելի խօսքերի վրայ գեներալ-ազիւ-
տանտ Վաննովսկու անունով 1901 թւի մարտի 23-ին տրուած
հրովարտակի մէջ, թէ՛ դպրոցը սրտազին հոգացողութեամբ
պէտք է վերաբերուի դէպի իր աշակերտները: Իւրաքանչիւր

բարեխիղճ մանկավարժի համար ակներև պէտք է լինի, որ հէնց սրտագին հոգացողութեան համար՝ դաստիարակութեան ընթացքին առաջադիմութեան մասին պէտք է արթնանալ և յամառ կերպով կատարել յայտնի սխառմի պահանջները, որոնց ենթարկուելը միայն կարող է ընտելացնել պատանուն՝ յարգանք տածել դէպի օրինականութիւնը։ Նմանապէս սրտագին հոգացողութիւնը աշակերտների բարոյական զարգացման մասին պարտք է դնում դաստիարակի վրա՝ զարթեցնել իր ժամանակ երիտասարդութեան մէջ անձնական պատասխանատուութեան զգացմունք կատարած յանցանքների համար, և ուրեմն պատշաճաւոր գէպքերում դիմել խտուրթեան միջոցներին, որ խընամբով համակերպուած չին յանցանքի աստիճանի և ուղղուելու ընդունակութեան հետ։ Երբ վերջապէս մանկավարժական ժողովը կը համոզուի, որ գործ ունի գիտակցական թշնամութեան հետ դէպի կանոններով սահմանուած կարգը և աշակերտի պարզորոշ կատաղութեան հետ, որի վրայ մինչև միջնակարգ դպրոցի դասնրթացն աւարտելը չը ներդրածեցին ոչինչ ներշնչումներ և բարեացակամ խորհուրդներ, այն ժամանակ դպրոցը ոչ միայն իրաւունք ունի (53 կան. կատ. մաս.), այլ մինչև անգամ պարտաւոր է վերջին դասարանի համապատասխան աշակերտին թոյլ չը տալ վերջնական քննութիւններ տալու իր տնայ բարոյականութեան պատճառով։ Այդ միջոցը՝ բացի անխուսափելի զսպող ազդեցութիւնից աշակերտների ընթացքի վրայ՝ նրա կանոնաւոր և զգոյշ գործադրութեան դէպքում օգտակար կը լինէր և այն տեսակէտով, որ բարձրագոյն դպրոցները կ'ազատուէին իրանց անկրթութեամբ պարծեցող, հետևաբար դիտմամբ ոչ-կուլտուրական տարրերից։

Դիմելով գործողութեան այն եղանակներին քննութեանը, որոնցով մանկավարժական մարմինը կարող է նպաստել վերև յիշած տխուր երևոյթների առաջն առնելուն և մասնաւորապէս պահպանել աշակերտին, որպէս զի նրա մէջ երևան չը գայ այն խրոխտացող և զայրացկոտ տրամադրութիւնը, որին նա օտար ագիտատորների ազդեցութեան տակ հեշտութեամբ ենթարկուած է՝ այժմ դպրոցների բարձր դասարաններում, ես պէտք է նախ և առաջ անեմ՝ կտրական պահանջ, որ ուսուցիչները և իշխանաւոր անձինք աշակերտներին դիմելու ժամանակ թոյլ չը տան իրանց կոպիտ և վիրաւորական նկատողութիւններ անելու։ Պէտք է ուղղել աշակերտի սխալ կամ անաջող պատասխանը հանգիստ, գործնական եղանակով, ծաղրի առարկայ չը դարձնելով աշակերտին, չը զայրանալով կամ կծու խօսքեր թոյլ չը տալով իրան։ Վարժապետի և դպրոցի գլխաւորի խրատի

խրաքանչիւր խօսքից աշակերտը պէտք է այն տպաւորութիւնը դուրս բերէ, որ նրա հետ խօսում են պարտականութեան ընդհանրութեամբ և նրա լաւութեան մասին հոգ տանելով. ոչ ուսումնական պահանջների լրջութիւնը, ոչ խստութիւնը վարքի գնահատութեան մէջ, ոչ կտրական եղանակը կորստաբեր կարծիքների դատապարտութեան մէջ չը պէտք է կորցնել տան ուսուցչին իր կատարեալ անձնիշխանութիւնը և աշկարայ բարեացակամութիւնը դէպի աշակերտը: Թէ դպրոցում առաջին անգամ զգացուած անարդարութիւնը, նոյնպէս և պատանու մէջ մարդկային արժանաւորութեան հասունացող զգացմունքի վիրաւորանքը կարող է նրա հոգու մէջ գցել անվատահոլութեան սերմ դէպի այն ընդհանուր կաղմը, որի մերձակայ արտայայտութիւնն է նրա աչքում դպրոցը, որտեղ նրան դաստիարակում է պետութիւնը:

Երկրորդ՝ ես ստիպուած եմ ուշադրութիւն դարձնել մի բոլորովին տարրական, բայց և այնպէս միշտ աչքից բաց թողնուող հանգամանքի վրայ. — որքան ակներև կը լինի աշակերտների համար, որ ուսումնարանում նրանց ստացած հոգևոր սընտունքն աւելի շահեկան է, քան այն, որ առաջարկում են ներանց ուսումնաձարաւորութիւնը լցուցանելու համար դպրոցի թշնամիները, այնքան աւելի հաճութեամբ նրանք կ'ընդունեն և կը ճանաչեն դպրոցի հեղինակութիւնը: Սրանից հետևում է այն, որ իր գիտութեան պաշարը չը հարստացնող, իր գիտութեան ձևերը չը կատարելագործող ուսուցիչը տալիս է ոչ միայն գիտակտիկական, այլ և մանկավարժական վնաս: Այսուամենայնիւ՝ անկախ իւրաքանչիւր դաս բովանդակալից և դասարանի համար օգտակար դարձնելու ձգտումից, — որի համար ուսուցիչը անպատճառ պէտք է նախապատրաստուի դասի համար, — ուսուցիչը պէտք է յիշէ, որ դասը ինքնընտրեալ ծառայում է որպէս միջոց դաստիարակչական ներգործման: Բարձր դասարաններում սա բնականաբար ուսուցչիչներին, գլխաւորապէս ռուսաց լեզուի և պատմութեան դասերի ժամանակ, պէտք է հասցնէ այն գիտակցութեան, որ նրանք պարտաւոր են օգուտ քաղել ուսուցումից՝ իւրացնել տալու համար աշակերտներին առողջ հայեացքներ շատ այնպիսի բաների մասին, որ յաճախ սխալ կերպով են ներկայացնում իրանց որոշ հասակի աշակերտները: Ուսուցումը այս ուղղութեամբ ամենին չը պէտք է կրէ արհեստական — խրատական բնաւորութիւն. խրատը ինքնընտրեալ կը բղխէ մանրամասն և համոզեցուցիչ բացատրութիւնից այն առարկայի, որ դարձել է զրոյցի նիւթ տուած

ուսումնական զբաղմունքի անմիջական յատկութեան զօրութեամբ:

Սրա հետ միասին չեմ կարող առանձին նշանակութիւն չը տալ այն հանգամանքին, որ ներկայումս բոլորովին թողնուած են այնպիսի զբոյցները, որոնք նուիրուած պէտք է լինէին բարձր դասարաններում աշակերտների՝ ուսերէնից կատարած տնային աշխատանքների քննութեան և բացատրութեան: Այդ զբոյցները զեղեցիկ նիւթ կը մատակարարէին աշակերտներին՝ ուսուցչի ղեկավարութեամբ միասին քննելու հարցեր, որոնց մասին անկարելի է ենթադրել, որ մտածմունքներ չը ծագէին աշակերտների մէջ բազմաթիւ պատմութեան, գրականութեան թէորիայի և ռուսաց գրականութեան պատմութեան այս կամ այն բաժնի հետ ծանօթանալիս: Նոյն իսկ շարագրութիւնների թեմաները տրուած են չափազանց միակողմանի կերպով. «դատողութիւններից» մինչև անգամ խուսափում են: Տետրակները շատ անգամ աշակերտներին չեն վերագարձնուում, և դասատուները արդարայնում են իրանց այդ բանում նրանով, թէ դասարանները այնքան լի են աշակերտներով, որ ժամանակ չէ մնում գրուած շարագրութիւնները ուղղելու, ինչպիսի հարկն է: Մասամբ հիմնաւոր համարելով այդ բացատրութիւնը, ես այսուամենայնիւ կարծում եմ, որ մանկավարժական ժողովները պէտք է միջոցներ գտնեն դուրս գալու այդ դժուար դրութիւնից: Որպէս օրինակ՝ ես մատնացոյց կը լինեմ հետեւեալ երկու միջոցների վրայ.— մի կողմից ուսուցիչը կարող է հերթ սահմանել աշակերտների որոշ խմբի համար շարագրութիւններ գրելու վերաբերմամբ՝ նշանակելով զանազան խմբերին զանազան թեմաներ: Միւս կողմից թեմաների մի մասը կարող է առաջարկուել ուսաց լեզուի ուսուցչի, իսկ մի քանիսը պատմութեան և հին լեզուների ուսուցիչների կողմից, որ աւելի համաչափութիւն կը մտցնէր տետրակներն ուղղելու աշխատանքի բաժանման մէջ: Տնային շարագրութիւնների կարևոր գերը այն բանի մէջ է կայանում, որ նրանց գրելու և մշակելու ժամանակ աշակերտը առաջին անգամ փորձում է իւր մտաւոր ոյժերը սեփական մտքերը ինքնուրոյնաբար արտայայտելու մէջ: Որքան պարզ կը լինի աշակերտի համար, թէ նրա դաստիարակները ուղադրութեամբ են վերաբերուում նրա աշխատանքին և լուրջ կերպով հոգում են օգուտ տալու նրան իրանց բացատրութիւններով և խորհուրդներով, նոյնքան աւելի բնական կը լինի սպասել, որ աշակերտը կը համոզուի, թէ ուսումնարանը բարեխղճաբար ծառայում է յօգուտ նրա իսկական հոգևոր շահերի: Աշակերտների գրաւոր աշխատանքների քննութիւնը և

բացատրութիւնը պէտք է անպատճառ կապ ունենայ բարձր դասարանների աշակերտների տնային ընթերցանութեան հետ: Տնային ընթերցանութիւնը այն ժամանակ միայն օգտաւէտ կը լինի, երբ աշակերտները կը սիրեն լուրջ ընթերցանութիւն, այսինքն այսպիսին, որի մասին նրանք կարող են իրանց հաշիւ տալ, թէ ինչ դուրս բերին կարգացածից: Տնային ընթերցանութեան, գրաւոր վարժութիւնների և նրանց դասարանական վերլուծութեան նպատակայարմար միացումը կը վարժեցնէ պատանիներին խոհականութեան, յարգանքի գէպի մտաւոր աշխատանքը և ձգտման՝ կարևոր ուշադրութեամբ վերաբերուելու գէպի իրանց բանաւոր և գրաւոր խօսքը: Բացի սրանից՝ լսելով ընկերների դատողութիւնները և ուսուցչի կարծիքը իր աշխատանքի մասին՝ աշակերտը աստիճանաբար հասնում է այն համոզման, որ պարտաւոր է չըջանկատութեամբ, առանց ծայրայեղութիւնների և անհամբերողութեան արտայայտելու իր մտքերը. նրա մէջ չէ կարող ծնուել այն գիտակցութիւնը, թէ նրան պէտք է շատ աշխատել՝ առաջ քան կարողանայ թոյլ տալ իրան վճռողական դատողութիւն յայտնելու աւելի կամ պակաս դժուար ընդհանուր հարցերի մասին:

Երրորդ. դասարանական դասատւութիւնից դուրս էլ դաստիարակները շատ առիթներ ունեն սաներին բացատրելու հարկաւոր հայեացքը իրերի վրայ և այդպիսով հեռացնելու ներքին դրդումը գէպի յայտնի կանոնների խանգարումը: Միջնակարգ դպրոցներում սովորող պատանիներից շատերի ներկայումս արտայայտած չափազանց զարմանալի անարգանքն ու նոյնիսկ արհամարանքը բացատրւում է օրինակ՝ նրանց չըջանում սաստիկ տարածուած այն կեղծ կարծիքով, որ իբր թէ համեստ և քաղաքավարի վերաբերմունքը գէպի մեծերը ստորացուցիչ է երիտասարդ մարդու համար և իբր թէ դա իշխանաւորների առաջ քծնելու մի ձև է: Այս գէպքում վարքը ուղղակի կախում ունի սխալ հայեցակէտից: Պարզ է, որ վերջինիս արտայայտութեանը հանդիպելով՝ դաստիարակը չը պէտք է բաւականանայ հետախուզական միջոցներով, այլ յանցաւորների գիտակցութեան մէջ պէտք է մտցնէ այն կարծիքի սխալը, որով նրանք առաջնորդուել են: Ընկերների մեծամասնութեան վճիռներին անպայման հպատակուելու կասկածելի պարտականութեան մասին եղած տիրապետող հասկացողութիւնների գէմ աջող կերպով մաքառել կարելի է միայն հանդարտ ու մանրամասն կերպով քննելով համապատասխան ընդհանուր հարցը, որը առաջ է եկել հետեւապէս ոչ այնպիսի հանդամանքներից, որոնցով

աշակերտների նշանաւոր մի խումբ զրգռուած տրամադրութեան մէջ է և իրան կապուած է համարում թեթեամտութեամբ տրուած խօսքի հետ: Սակայն մասսայական ցոյցերի ժամանակ էլ պատժելուց առաջ պէտք է դիմել համոզելու միջոցին, որը ընդունակ լինի զղջում առաջ բերելու աշակերտների մէջ, որպէսզի նրանք պատրաստակամութեամբ հրաժարուեն յետագայում փոքրամասնութեան վրայ բարոյական ճնշում գործ դնելուց: Ամեն մի յարմար դէպքում հարկաւոր է յիշեցնել աշակերտներին, որ զարգացած ու կրթուած մարդու զգացմունքը չը պէտք է անմիջապէս գործի անցնէ, այլ խելքի և խղճի վերահսկողութեան պէտք է ենթարկուի, առանց որոնց մասնակցութեան մեր վարմունքների մէջ մենք կը դառնայինք հասարակ ստրուկներ մեր կրքերի: Մի խօսքով հարկաւոր է աշակերտներին հասկացողութեան մէջ խոր ամրացնել դէպի նրանց արուած դաստիարակչական պահանջների իսկական իմաստը, և նրանց բարոյական մտածողութեան հորիզոնը լայնացնելով, կարելի է հասնել լուրջ հետեւանքների, մանաւանդ եթէ անդադար ձգտել դպրոցական երիտասարդութեանը միաժամանակ իւրացնել տալու բարոյական որոշ սովորութիւններ:

Չորրորդ, աշակերտների ղեկավարները և դաստիարակները չը պէտք է աչքից բաց թողնեն, որ ծնողների մօտ ապրող աշակերտը իր ժամանակի նշանաւոր մասը անց է կացնում ընտանիքի մէջ, որը նախազգուշացրուած լինելով աշակերտի նրկատուած չեզոքմաների մասին ցանկալի ընթացքից՝ կարող է դառնալ դպրոցի ամենաազդեցիկ և բարեբար դաշնակից նրա ուղղագործում: Հարկաւոր է սակայն ծնողներին դիմել այն ձևով, որ նրանք այնպիսի կարծիք չը կազմեն, որ իբր թէ ուսումնարանական իշխանութիւնը ծայրայեղ միջոցներ է ուղում գործ դնել, օրինակ վարքից թւանշանը խիստ պակսեցնելով կամ մինչև անգամ աշակերտին աւճակելով, այլ համոզուեն, որ խնդրում են նրանց աջակցութիւնը՝ պարզաբանելու այն պայմանները, որոնցով կարելի լինէր հասնել այնպիսի դրութեան, որ աշակերտը պատրաստակամութիւն ցոյց տայ ենթարկուելու նրան արած արդարացի պահանջներին: Մանաւանդ պէտք է խուսափել այնպիսի յայտարարութիւններ անելուց ընտանիքին, որոնք կարող էին այնպէս հասկացուել, թէ կամենում են խորախուսել տնային ազդեցութեան մանկավարժական ծուռումուռ միջոցներ՝ ուղղուող աշակերտի վերաբերմամբ: Այդ նպատակով ընտանիքին մօտենալու անկեղծ ցանկութեան ժամանակ դասարանական դաստիարակը և դիրեկտորը կը ստանան աւելի յաճախ, քան կարելի է ենթադրել ընտանիքի այժմեան

յարաբերութիւնների հիման վրայ նրանց հետ, իրանց համար անհրաժեշտ ցուցմունքը այն վարուեցողութեան համար մի որ-
ևէ աշակերտի հետ, որը հէնց տեղին է և նպատակայարմար:

Այն գէպերում, երբ ծնողները անձիշդ զաղափար են կազմել մանուկների իսկական վարքի մասին զպրոցում հարկաւոր է աշխատել ծանօթացնելու ընտանիքը իրերի իսկական դրութեան հետ և վերացնել աննկատելի կերպով կի-
տուող բոլոր թիւրիմացութիւնները: Այդ տեսակ ուշադիր վե-
րաբերմունքը գէպի ծնողների բարոյական հեղինակութիւնը ամենեւին չը պէտք է սակայն փոխարկուի փոքրոգի զիջողու-
թեան այն անհիմն ցանկութիւնների առաջ, որոնց նպատակն է նուաստացնել օրինականութեան հեղինակութիւնը զպրոցում: Ու-
րովհետև ապա շատ աշակերտներ ապրում են աշակերտական բը-
նակարաններում, այդ անտեսառով դաստարանական դաստիարակ-
ները, տեսուչները և զիրեկտորները պարտաւոր են վերջիններին
այցելելու ժամանակ ի նկատի ունենալ ոչ միայն արտաքին վե-
րահսկողութիւնը, այլ և բարոյական կապ հաստատելը այդ աշա-
կերտների հետ, որոնք կարիք ունեն մեծերի բարեկամական
վերահսկողութեան: Նպատակը այստեղ եւս այն է, որ չը պէտք
է աշակերտի համար կատարելապէս օտար մարդ մնալ, որից
բացի պաշտօնական խօսքերից երբէք ոչինչ չես սպասում, և
որի մասին մինչև անգամ չես յիշի, երբ ընկնում ես կասկածե-
լի և հոգեկան կուռի մէջ:

Նախընթացում չօչափելով դաստիարակչական ազդեցու-
թեան այն զանազան եղանակները պատանի աշակերտների վը-
րայ, որ ունի դպրոցը, եւ չէի կարող, ինչպէս ինքնըստինքեան
հասկանալի է, նրանց հետ մի շարքում դնել աշակերտի կրօնական
զգացմունքին դիմելը: Բայց գործի էութիւնը անխուսափելի
կերպով մանկավարժին այն խորհրդածութեանն է հասցնում,
որ ինքն եւս պարտաւոր է օրինակ ցոյց տալ, որ արմատներ
ունի բռնած իր քրիստոնէական իղէալներում, և այդ պատճա-
ռով պաշտպանում է նրա հեղութեան հոգեկան ոյժերը՝ տանե-
լու այն ամբողջ ծանրութիւնը, որի հետ կապուած է մարդ-
կային գործունէութիւնը յօգուտ ուրիշ մարդկանց, ծառայելու
չըջանում, և որ նա կատարած չէր լինի իր պարտաւորութիւնը,
եթէ չը զարգացնէր երիտասարդ հոգիներին՝ Աստու պատ-
գամների ըմբռնողութիւնը, կանգնեցնելով անչեղ կերպով իր
սաներին բարեխղճութեան, ուղղամտութեան և անփոփոխ բա-
րեացակամութեան ճանապարհի վրայ մինչև անգամ գէպի նը-
րանց, որոնցից, ինչպէս նրանց թւում է, նրանք վիրաւորանք

են կրելի Սակայն այստեղ աւելի քան որեւէ տեղ պէտք է յիշել, որ Աստծու անուանը զուր տեղ տալը մեղք է, և որ դիմելը կրօնական ներդործութեանը աշակերտի վրայ, արհամարհելով նրան դէպի կեղծաւորութիւնը խրախուսելու վտանգը, ընդունակ չէ պատանհների վստահութիւնը և յարգանքը ձեռք բերելու արժանի դաստիարակը: Նոյնպէս աններելի կը լինէր կրօնական խրատներին դիմել սովորական և մանր-մունր պախարակումների ժամանակ: Ընդհակառակը, զարմանալ պէտք է, որ երբ, ինչպէս այդ դժբաղդաբար յաճախ պատահում է, աշակերտը դասերի մէջ կաղալու պատճառով կամ իր վրայ դրած պատիժը անարդար համարելով՝ հասնում է բարոյական կատարեալ լքման, յուսահատութեան սահմանին, նա իր դաստիարակներից չէ ստանում կրօնական մխիթարութիւն, որ ընդունակ լինէր հանգստացնել և իր ժամանակին սիրտ տալ նրան:

Յուսալով այն բանի վրայ, որ ներկայ շրջաբերականի մէջ բացատրուած խորհրդածութիւնները իսկական համակրանք կը գտնեն ձերդ գերազանցութեան յանձնուած դպրոցների մանկավարժական խորհուրդների մէջ և կարգալուց յետոյ մեռած տառչեն մնալ, այլ առիթ կը տան եռանդուն ջանքեր գործ դնելուն՝ մոռցնելու թագաւոր Կայսրի գծագրած նպատակին համապատասխան բանականութիւն և սրտագին հոգացողութիւն պատանելութեան մասին նրա դաստիարակութեան գործում, խնդրում եմ ձերդ գերազանցութիւնից իմ դրած հարցերը քննութեան առարկայ դարձնել նոյնպէս ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդում և այդ ըննութեան հետեանքները հաղորդել մինիստրութեան:

Մեր ընթերցողներին մի քանի անգամ առիթ ենք ունեցել ծանօթացնել ֆինանսների մինիստրութեան վարչութեան տակ գտնուող առևտրական դպրոցների համակրելի առանձնաշայտկութիւնների մասին: Այժմ այդ մինիստրութեան ուսումնարանական մասի կարգադրութեամբ արուած են մի քանի կարգադրութիւններ, որոնցով սահմանափակուած է մանկավարժական ժողովների ինքնուրոյնութիւնը և վերականգնած է աշակերտներին թւանշաններ դնելու սիստեմը, որ վերացրուած էր այդ ուսումնարաններից չատերում: Այդպիսով առևտրական ուսումնարանները կամաց-կամաց մօտենում են լուսաւորութեան մինիստրութեան միջնակարգ ուսումնարանների մէջ ընդունուած վարչական կարգերին:

1903 թ. յունիսի 8-ին Բարձրագոյն հաստատուած է Պետական խորհրդի կաբինէրը Պետերբուրգի քաղաքային հասարակական ինքնավարութեան փոփոխութեան մասին: Նոր օրէնքով սաստկացուած է ներքին գործոց մինիստրի վերահսկողութիւնը քաղաքային խորհրդի գործողութիւնների վրայ: Նոր օրէնքով քաղաքագլխի պարտաւորութիւնից բաժանուած է քաղաքային խորհրդի նախագահի պարտաւորութիւնը, որի համար ընտրուում է առանձին պաշտօնեայ: Ընտրողական իրաւունք է տրուում և այն բնակարանատէրերին, որոնք իրանց բնակարանների համար վճարում են տարեկան 1000 ռուբլուց աւելի: Բոլոր ընտրողները բաժանուում են երկու կարգի, առաջին կարգի մէջ մտնում են խոշոր հարկատուները, դրանց տրւում է քաղաքային խորհրդարանի մէջ մասնակցելու $\frac{1}{3}$ ձայն, իսկ երկրորդ կարգին պատկանում են մնացած բոլոր ընտրողները: Ընտրութիւնները կատարւում են ոչ գնդակների քուէարկութեամբ և ընտրողական ժողովներում, այլ իւրաքանչիւր ընտրող յանձնում է ընտրողական մասնաժողովի նախագահին թղթի վրայ գրուած թեկնածուների անուններ: Ընտրուած են համարւում բացարձակ մեծամասնութիւն ստացած անձինք, թէկուզ մասնակցողների թիւ կէսից պակաս լինի այդ:

Քաղաքագլուխը և նրա օգնականները նշանակւում են Բարձրագոյն իշխանութեամբ ներքին գործոց մինիստրի առաջարկութեամբ: Ուպրաւայի 8 անդամները և քարտուղարը ընտրւում են Դումայից: Քաղաքագլուխը, նրա օգնականները, ուպրաւայի անդամները և քաղաքային քարտուղարը հաշւում են պետական ծառայութեան մէջ:

Յունիսի 4-ին Բարձրագոյն կայացած հրամանով փոփոխութեան է ենթարկւում գործարանական տեսուչների կանոնադրութիւնն այն մտքով, որ գործարանական տեսուչները կախում են ստանում ներքին գործոց մինիստրից, այդ տեսուչների նշանակումը, տեղափոխութիւնը, պարգևատրութիւնը, կարճատև արձակուրդ տալը այսուհետև կատարուելու է նահանգապետների իշխանութեամբ: Նահանգապետները իրաւունք ունեն գեկուցումներ պահանջել այդ պաշտօնեաներից:

Գոյութիւն ունեցող օրէնքների մէջ լրացրուած են որոշ յօդուածներ գործարանական աւագների մասին: Պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ գործարանական արդիւնա-

բերական վարչութիւններին իրաւունք է տրւում բաժանել իրանց բանուորներին որոշ կարգերի և թոյլ տալ դրանցից իւրաքանչիւրին իրանց միջից ընտրելու աւագների թիկնածուներ, որոնցից այդ վարչութիւնները հաստատում են աւագներ, Աւագը համարւում է իրան ընտրող բանուորական կարգի միջնորդը և ներկայացուցիչը թէ գործարանական վարչութեան և թէ իշխանութեան առաջ:

Պետական խորհուրդը քննելով ռուսաց սինդիկատական կուրորի առաջարկութիւնը դրամական նպաստ նշանակելու պետական գանձարանից ռուսադաւան եկեղեցիների շինութեան համար Անդրկովկասի այն գիւղերում, ուր բնակւում են ռուս գաղթականներ, որոշեց ներկայ 1903 և հետեւեալ 1904 թւականների ընթացքում 20,000-ական ըուբլի տալ պետական գանձարանից. իսկ 1905 թւականից սկսած նախահաշի մէջ մտցնել կրեդիտ նոյն նպատակի համար այնքան գումարի, որքան հարկաւոր կը լինի, սակայն յամենայն դէպս տարեկան 20,000 ըուբլուց ոչ աւելի:

Ֆինլանդական գներալ-նահանգապետը ուշադրութիւն է դարձրել, որ այդ երկրում քիչ են ռուսաց ժողովրդական ուսումնարանները: Առայժմ կարևոր է համարւում բանալ 9 կէտերում այդպիսի ուսումնարաններ և դիմել է լուսաւորութեան մինիստրին: Համակրելով գներալ-նահանգապետի հայեացքներին՝ լուսաւորութեան մինիստրը առայժմ հնարաւոր է համարել իւրաքանչիւր տարի յատկացնել 4,185 ռ. երեք դըպրոցի պահպանութեան համար՝ սկսած այս տարւայ յուլ. 1-ից:

«Правительственный Вѣстникъ» լրագրում տպւում է Բարձրագոյն ուկազ կառավարչական Սենատին. «Ուշադրութեան առնելով, որ կառավարութեան ձեռնարկութիւնները, որոնք վերաբերւում են հողային կրեդիտին, իրանց ազդեցութեամբ կալուածատիրութեան և ժողովրդական տնտեսութեան կազմի վրայ ընդհանուր պետական նշանակութիւն ունեն և պահանջում են անդադար համաձայնեցումն թէ այն նախադժուումների հետ, որ Մենք առանձնապէս մատնանիչ ենք արել ներկայ տարւայ փետրուարի 26-ի մանիֆեստում, նոյնպէս և ընդհանուր կարիքների և պետութեան շահի հետ, Մենք բարեօք համարեցինք հիմնել հողային կրեդիտի գործերի համար յատուկ կոմիտեո հետեւեալ հիմունքներով. 1) Հողային կրեդիտի գործերին վերա-

բերեալ կոմիտեով քաղկացած է՝ ֆինանսների կոմիտեի նախագահի նախագահութեամբ՝ ներքին գործերի, ֆինանսների և երկրագործութեան ու պետական կալուածների մինիստրներից, պետական կոնտրոլներից և անմիջապէս Մեղանից ընտրուած անդամները: 2) Կոմիտեի խորհրդածութեանը ենթարկուած են այն հարցերը, որոնք վերաբերուած են հողային կրեդիտի հիմնարկութիւնների գործունէութեան ընդհանուր ուղղութեանը և որոնք կոմիտեի քննութեան առարկայ են դառնում յատուկ Բարձրագոյն հրամաններով հէնց իրանց կոմիտեի որոշումների կամ կոմիտեի կազմի մէջ մտնող մինիստրների առաջադրութիւնների համեմատ: 3) Պետական ազնւական կալուածական և գիւղական հողային բանկերի տարեկան հաշիւները մտցնում է կոմիտեի ֆինանսների մինիստրը այդ հաշիւները քննելու համար՝ այդ հիմնարկութիւնների գործունէութեան պետական չանքերի հետ համաձայն ուղղութեան նկատմամբ: 4) Կոմիտեի ներկայացուցիչները նախագահը ներկայացնում է Մեր բարենայեցողութեանը՝ նրանց մեր յուցմունքների համաձայն շարունակելու համար: Կառավարչական Սենատը չի յապաղի այդ կատարելու պատշաճաւոր կարգադրութիւնն անել: Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է. «Նիկողայ»:

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ հրատարակուած է կարգադրութիւն, որով թոյլ է տրուած վերադարձնելու Քութայիսի նահանգի ազնւականութեան այն գումարները, որ նա տուել է Միքայէլեան կալուածական բանկին որպէս բաժնետիրական դրամագումար:

«Кавказъ»-ում կարդում ենք.—«Կովկասում քաղաքացիական մասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Իշխան Գ. Ս. Գալիցըին՝ համաձայն Բագուի պ. նահանգապետի միջնորդութեան՝ թոյլատրեց տալ Զաւադեան գաւառի 72 գաղթական նորաչէնցիներին, —Ալեքսանդրովսկ գիւղի 39 ընտանիքին և Նիկոլայսկ գիւղի 33 ընտանիքին՝ 10,167 ռ. նպաստ անաշինութեան, գիւղատնտեսական գործիքներ գնելու և մասնաւոր պարտքերը վճարելու նպատակով:

Բորչալու գաւառի Հաջիքէնդ գիւղի անհող գիւղացիներից 11 ծուխ դիմել էին Կովկասեան գլխաւոր վարչութեան՝ խնդրելով յատկացնել իրանց Թիֆլիսի նահանգի կամ Զաքաթալեան

չըջանի ազատ արքունական հողերից: Խնդրատուներին յայտնուած է, որ այդ նպատակի համար ազատ հողեր չը կան յիշեալ տեղերում:

«Терск. Вѣд» ցրագրում կարգում ենք. «1899 թւականին առաջին անգամ Կովկասի տեղացիները զինուորագրութեան կանչուեցին այնպիսի զօրամասերում, որոնք գտնուում են Կովկասից դուրս: Ներկայ տարւայ աշնանը նրանք վերջացնելով ծառայութիւնը՝ կը վերադառնան տուն: Ուշագրութեան առնելով այս հանգամանքը՝ կովկասեան զինուորական չըջանի հրամանատարի օգնականի կարգադրութեամբ՝ զինուորական շտաբի կառավարիչը գիմել է թերեքի չըջանի կառավարչին՝ խնդրելով մանրամասն տեղեկութիւններ հաղորդել այն մասին, թէ ինչ տրամադրութեամբ կը վերադառնան այդ զինուորները, ինչ տպաւորութիւն են նրանք դուրս բերել իրանց ծառայութեան մասին եւրոպական Ռուսաստանի նահանգներում, ինչպէս է ազդել կեանքը իր բոլոր երեւոյթներով նրանց վրայ հայրենիքից դուրս, որքան նրանք խրաջրել են ռուս կեանքի առանձնայատկութիւնները, ռուսական քաղաքացիականութիւնը և ռուսաց լեզուն, նոյնպէս և այն, թէ ինչ տպաւորութիւն կը գործէ նրանց գալը տեղացիների վրայ:

Չորեքշաբթի, յուլ. 2-ին, Ադելխանեանի կաշու գործարանի բանուորներից մէկը սպանութեան փորձ կատարեց այդ գործարանի կառավարիչ Ի. Մարկոսեանի կեանքի դէմ, երբ վերջինս կանգնած՝ գործարանի գաւթում խօսակցում էր ծառայողներից մէկի հետ: Սպանութեան փորձ անող բանուորը աւորճանակն արձակեց երեք անգամ և վիրաւորեց Մարկոսեանի աջ ձեռքը և ուսը: Երբ Մարկոսեանի խօսակցից Յարութիւնեանը կամեցաւ բռնել բանուորին, վերջինս մի անգամ էլ արձակեց աւորճանակը և վիրաւորեց Յարութիւնեանի ոտը: Դրանից յետոյ նա զինաթափ արուեց և ձերբակալուեց: Բանուորի ասեով՝ գործարանի կառավարիչ Մարկոսեանը չափազանց կոպիտ էր վարւում բանուորների հետ:

Յուլիսի 12-ին Թիֆլիսի տրամվայ վագոնները բոլոր գծերի վրայ չէին բանում: Վագոնների երթևեկութիւնը նորոգուեց

միայն նոյն օրը երեկոյեան դէմ Վադոնները բանում են այժմ բոլոր գծերի վրայ, բացի Օրթաճալի գծից, իւրաքանչիւրը 2 զինուորի հսկողութեամբ:

Յուլիսի 12-ին Թիֆլիսի քաղաքային ուսարաւային ներկայացան մի խումբ մագդործներ և միս մորթողներ, և գանգատ յայտնեցին այն կարգերի դէմ, որոնք տիրում են Թիֆլիսի սպանդանոցում: Ուսարաւայի անդամ իշխան Չէրքէզով լսելով նրանց յայտարարութիւնը՝ առաջարկեց ձեռնարկել իրանց գանգատը և գրաւոր կերպով ներկայացնել ուսարաւային, սակայն մագդործները չը կատարեցին այդ խորհուրդը և սկսած յուլիսի 11-ից—16-ը դադարեցին միս մորթել: Այդ օրերում ոչ մի խանութում միս չէր ճարուում, և Թիֆլիսի ամբողջ ազգաբնակչութիւնը մնացել էր առանց մսի:

Թամաճեւի քարվանսարայի և Դվորցովայեա փողոցի վաճառականները՝ համաձայն առաջարկութեան վաճառականների աւագ Ալիբէկեանի—ստորագրութիւն տալ և պարտաւորուել խանութները բանալու թէ ամառ և թէ ձմեռ՝ առաւօտեան ժամի 8-ին և փակելու երեկոյեան ժամի 8-ին, բոլորն էլ յայտնեցին իրանց համաձայնութիւնը: Ստորագրուել են 85 հոգի: Արդէն յուլիսի 5-ից այդ վաճառականների խանութները երեկոյեան ժամի 8-ին փակուում են, բացի այն խանութներից, որտեղ վաճառուում են ուտելիղէշներ:

«КАВКАЗЪ» լրագրում տպագրուած է Թիֆլիսի նահանգապետի հետեւեալ որոշումը. «1903 թւականի յուլիսի 16-ին ես Թիֆլիսի նահանգապետս՝ կովկասեան կառավարչապետի հրատարակած պարտադիր կանոնների հիման վրայ որոշեցի բանտարկութեան ենթարկել հետեւեալ անձերին՝ ոստիկանութեան պահանջը՝ փողոցներում համախմբումներ չը կազմել՝ անկատար թողնելու համար.—Երեք ամսով.—1) Մչեղրիձէ Դմիտրի (ատաղձագործ), 2) Էդզվերիձէ Վիկտոր (սպասաւոր), 3) Էդզվերիձէ Իլիկո (նոյնպէս), 4) Բեսսելի Էրաստ (նոյնպէս), 5) Կոյիււա Լուկա (նոյնպէս), 6) Դոլիձէ Սարգիոն (նոյնպէս), 7) Բաջդուա Լեան (մարկետ), 8) Յիմակուրիձէ Իօսիֆ (սպասաւոր), 9) Սեջայ Անդրէյ (նոյնպէս), 10) Թոգուա Իւարիոն (նոյնպէս), 11) Խոլտասի Գէորգի (նոյնպէս), 12) Կոչիաշվիլի Կոստանդին (նոյնպէս), 13) Սարաջայեա Տարաս (նոյնպէս), 14) Էդեզվերիձէ Գէորգի (նոյնպէս), 15) Արգարեանց Էվստաֆի (նկարիչ), 15) Աւագով Իվան (կաթ-ձախող), 17) Մարտաշվիլի Նիկոլայ (գործա-

կատար), 13) Ալթուհաշվի Սրտեմ (նոյնպէս), 19) Շիշնիաշվի իլիա (նոյնպէս), 20) Պապաշվի Սանդրո (նոյնպէս), 21) Զագանաշվի իվան (բանուոր), 22) Իօանով իվան (քարտաշ), 23) Յիգագիա իլիկո (կօշկակար), 24) Գոլովացի Գէորգի (փականագործ), Սաուրիշվի Ալեքսանդր (քարտաշ), 26) Լոկիշվի Շաքրօ (ատաղձագործ), 27) Պրուիձէ Սաբօ (կոնդուկտոր), 28) Նադիրաձէ Գէորգի (ձիաքարչի վրայ քշող), 29) Կուտուաշվի Քիտէս (նոյնպէս), 30) Սարբուլաձէ Էրաստ (նոյնպէս), 31) Շտուկիձէ Նիկոլայ (կօշկակար), 32) Սագարաձէ Երմոլայ (կոնդուկտոր ձիաքարչի վրայ), 33) Պարապանաշվի Դաւիթ (ձիաքարչի վրայ քշող):

Նրկու ամնով.—1) Կուչուխիձէ Վիկտոր (գործակատար), 2) Սարգիսով Գէորգ (կօշկակար), 3) Խոսրովի Սվրասա (ջրմուղում ծառայող), 4) Մարիանով իվան (հիւան), 5) Կոցիաշվի Գուրգէն (մշակ), 6) Եղիգարով Գէորգի (հիւան) 7) Նաշվալի Սիկօ (քարտաշ), 8) Բադալով Դաւիթ (հիւան), Զարիձէ Սոլոմոն (վառարան շինող), 10) Ագնիաշվի իվան (ատաղձագործ):

Մէկ ու կէս ամնով.—1) Կարուսինիձէ Լուկա (սպասաւոր), 2) Կոլաձէ Մինօ (տպարանի ծառայող), 3) Շարաշանիձէ Գէորգի (գրաշար), 4) Զիւէիձէ Նիկոլայ (գրաշար), 5) Նուկրաձէ Գէորգի (ատաղձագործ), 6) Դեմիոշվի Գրիգորի (ձիաքարչի ծառայող), 7) Մայսուրաձէ Գէորգի (փականագործ), 8) Կերեսելիձէ Գալակտիոն (ատաղձագործ), 9) Իօաշվի Վարլասա (ջրմուղի ծառայող), 10) Կոբիշալիձէ Սերգէյ (սպասաւոր):

Մի ամնով.—Շալամելաշվի Գէորգի (գործակատար):

Նրկու շաքթով.—1) Էրաձէ Ալեքսէյ (սպասաւոր), 2) Գելենիձէ Բոստոմ (նոյնպէս), 3) Պետրոսով Հայկ (տպարանական ծառայող), 4) Բենդիաշվի Վարլասա (սպասաւոր), 5) Պերտենաւա Անդրէյ (նոյնպէս):

Իւրաքանչիւրի բանտարկութեան սկիզբը պէտք է համարել այս տարւայ յուլիսի 14-ի երեկոյեան 9 ժամը:

Թիֆլիսի նահանգապետի որոշումը.—1903 թւականի յուլիսի 13-ին եւ Թիֆլիսի նահանգապետս՝ Թիֆլիս քաղաքի համար կովկասեան կառավարչապետի կողմից հրատարակուած պարտադիր կանոնների հիման վրայ որոշեցի.—ոստիկանութեան պահանջը՝ փողոցներում համախմբումներ չը կազմել՝ անկատար թողնելու համար բանտարկութեան ենթարկել հետեւեալ անձերին երեք ամնով. յուլիսի 11-ի երեկոյեան ժամի 10-ից.— Հաջթուխների 1) Էրմանէ Դրեգվաձէ, 2) Օսլան Էրաձէ, 3) Եւզենի Կոցիաձէ, 4) Նեստոր Զինգուպաձէ, 5) Սովրամի Կեմակ-

լիձէ, 6) Նիկո Պետրիաշվիլի, 7) Իլիկո Սերաձէ, 8) Դորիսպան Դաուշվիլի, 9) Սանդրո Դավիտուլիանի, 10) Դրավաձալի-Անտոն Սխիրալաձէ, 11) Շերվա-Գերասիմ Դվալիշվիլի, 12) Սիմէոն Գէորգորիանի, 13) Դրավաձալի-Բազրատ Սխիրալաձէ, 14) Լևան Գվինցաձէ, 15) Թոմա Սոխաձէ, 16) Պոլիկարպ Կոցիտաձէ, 17) Աւկսէն Դոլաբերիձէ, 18) Մելիտոն Խուցիտաձէ։ Մագործներ.—1) Ալեքսանդր Յովրիեանով, 2) Սոլոմոն Կաղաշվիլի, 3) Գէորգի Բէգիաշվիլի, Կառապան Եակով Բայեստիշվիլի, Բանուորներ.—1) Աւետիք Աւետիսեանց, 2) Սոլոմոն Բուրուշաշվիլի, 2) Սերգէյ Խանանով, 4) Արշակ Գէորգով, Շամիլ Տըվաուրի, Մի ամսով.—գործակաւտարներ.—1) Ալեքսէյ Մագալով, 2) Նիկոլայ Կանդելակի, 3) Ալեքսէյ Բերիաշվիլի, 4) Բազրատ Արութինով, 5) Շաքրո Պուլխուերիկիձէ, 6) Սոլոմոն Սէլիմաշվիլի։

«Кавказъ» լրագրում տալագրուած է Թիֆլիսի նահանգապետի հետեւեալ որոշումը. «1903 թւականի յուլիսի 18-ին ես Թիֆլիսի նահանգապետս՝ համաձայն կովկասեան կառավարչապետի՝ Թիֆլիս քաղաքի համար հրատարակած պարտադիր կանոնների, որոշեցի ոստիկանութեան պահանջը՝ համախմբումներ չը կազմել փողոցներում՝ անկատար թողնելու համար բանտարկել երեք ամսով. 1) Շահվերդով Սերգէյին (փականագործ), 2) Քափանաձէ Պաւլին (հացթուխ), 3) Մայսուրաձէ Բոժգենին (հացթուխ), 4) Միկաձէ Գէորգին (ղերձակ), 5) Տուրգաձէ Վասիլին (ձիաքարչի կոնդուկտոր), 6) Գելիկուրով Գրիգորին (ձիաքարչի կոնդուկտոր), Գէորգորիանի Գէորգին (երկաթուղային բանուոր), 8) Ալասանիա Սամսոնին (փականագործ), 9) Բենդուկիձէ Դմիտրին (փականագործ), 10) Աղաջանով Մանուկին (ներկարար), 11) Օդդոմելով Դաւթին (բանուոր ձիաքարչի գործարանում), 12) Մնջոյեան Խաչատուրին (գործակատար)։ Երկու ամսով.—1) Սոնակէ Լաւրենտիին (փականագործ, 2) Խուրցելով Պետրին (բանուոր)։ Մէկ եւ կէս ամսով 1) Լեբանիձէ Գալակտիոնին (հացթուխ), 2) Գուրբելաձէ Գէորգին (ներկարար), 3) Սիմոնով Օհանէսին (ներկարար), 4) Գձելիձէ Ալեքսէյին (հացթուխ)։ Վերոյիշեալ անձերից իւրաքանչիւրի բանտարկութեան ժամանակամիջոցը պէտք է հաշուել 1903 թւականի յուլիսի 17-ի առաւօտեան ժամի 9-ից»։

Ռուսաց «Գործակալութիւնը» տեղեկութիւններ ստացաւ և ստուգեց ներքին գործերի մինիստրութեան մէջ, որ յուլ. 1-ին Բիւրի-ձէյրաթում «Մանթաշեւ» և «Բագու» ընկերութիւններին

բանուորները գործադուլ արին. շուտով գործադուլը տարածուեց Սև և Սպիտակ բաղաքի մնացած գործարաններում: Յուլիսի 4-ին բանուորների գործադուլ սկսուեց Բագուի երկաթուղու արհեստանոցներում, որի պատճառով ապրանքատար գնացքների երթեւեկութիւնը դադարել է: Ներկայումս Բագուում և Բալախանիում չեն աշխատում բոլոր գործարանները, տրամվայը, տպարանները, մասնաւոր ընկերութիւնները և արհեստանոցները: Փողոցային չնչին անկարգութիւնների մի քանի դէպքեր պատահեցին: Հարկաւոր եղաւ միջամտութիւն զինուորական ոյժի, որից այնտեղ բաւական քանակութեամբ կայ:

Բագուի լրագիրները հաղորդում են, որ իւրաքանչիւր ֆիրմայի նաւթահորերի վրա կը պցրուած է հետեւեալ յայտարարութիւնը. 1) Բոլոր ծառայողները, արհեստաւորները և բանուորները, որոնք կը գան ծառայութեան մինչև առաւօտեան 6 ժամը երկուշաբթի, ներկայ յուլիսի 14-ին, առաջուան պէս ծառայութեան մէջ կը համարուեն ֆիրմայի մօտ: 2) Բոլոր ծառայողները, արհեստաւորները և բանուորները, որոնք չեն գալ բանելու վերոյիշեալ ժամանակամիջոցին, արձակուած կը համարուեն յուլիսի 5-ից և հրաւիրուած են ստանալու իրանց հաշիւը: 3) Այն բոլոր ծառայողները, արհեստաւորները և բանուորները, որոնք եկած կը լինեն բանելու մասնացոյց արուած ժամանակամիջոցում, կարող են յայտնել իրանց կարիքների մասին ֆիրմայի վարչութեան, այդ կարիքները քննութեան կ'առնուեն, և ըստ կարելւոյն բաւարարութիւն կը տրուի ֆիրմայից:

«Баку» լրագրում կարգում ենք. «Երեկ, յունիսի 10-ին, ձիաքարչի երթեւեկութիւնը վերականգնուեց: Վագոններն ամբողջ օրը չրջում էին երկու զինուորի ուղեկցութեամբ: Շատ կոնգուկաորներ չ'եկան աշխատանքի. նրանց փոխարինեցին քշողները, քշողներին՝ փողոցից վարձուածները, իսկ կոնտրոլորների փոխարէն աշխատում էին ձիաքարչի գրասենեակի ծառայողները:

«Кавказъ» լրագրում տպագրուած է հետեւեալ պաշտօնական տեղեկութիւնը. «Յուլիսի 14-ին, Միխայլովօ կայարանի դեպօրի արհեստաւորները աղքատ ասուլոցից յետոյ թողեցին աշխատանքները և միանալով նաւթամուղի բանուորների հետ՝ կանգնեցրին Թիֆլիսից գնացող ապրանքատար գնացքը, վայր բերին գնացքից մեքենավարին և հնոցապաններին և արձակելով յոգեմեքենան՝ թողեցին ճանապարհի վրա: Ապա ամբողջ դիմեց

դէպի կայարանի այն սենեակները, ուր զետեղուած են հեռագիրը և ապրանքների գրասենեակը, և այնտեղ փորձեցին դադարեցնել աշխատանքները: Ստիպելով ապա փակել Միխայիլովօի շուկայի առևտրական և արդիւնադորձական հիմնարկութիւնները, ամբոխը՝ բաղկացած մօտ 500 հոգուց, հաւաքուեց երկաթուղու կամուրջի մօտ այն տեղում, ուր բաժանուում են իրարից Սուբամի և Բորժոմի գծերը: Բորժոմից այդ ժամանակ եկած մարդատար գնացքը ստիպուած էր կանգ առնել, որովհետև ամբոխը կտրել էր նրա ճանապարհը: Երկաթուղային գործակալների, ոստիկանական պրիստաւի և երկաթուղիական ժանդարմային աստիճանաւորների սպառնալիքները և ցրուելու պահանջը ամբոխը թողեց անուշադիր և Սուբամից կանչուած զօրախմբի վրայ՝ բաղկացած մօտ 40 զինուորներից՝ սկսեց գցել քարեր, ամբոխը միննոյն ժամանակ փորձ արեց խելիւ գինուորների ձեռքից հրացանները: Այդ ժամանակ զօրախումբը և նոյն տեղում գտնուող ոստիկանական պահապանները կրակ բաց արին, որի հետեանքն այն եղաւ, որ վեց մարդ սպանուեց և 20 մարդ էլ վիրաւորուեց. վերջիներից չորսն արդէն մեռել են: Դրանից յետոյ ամբոխը ցրուեց, և կարգը վերականգնուեց:»

Մայիսի 5-ին Բարձրագոյն հաստատուած է պետական խորհրդի կարծիքը, ներքին գործոց մինիստրի առաջարկութեան համաձայն, որ Լւրդպական Ռուսաստանի 46 նահանգներում կազմակերպուի և մօցնուի գաւառական պոլիցիական պահնորդներ՝ հաշւելով իւրաքանչիւր 2500 երկսեռ ազգաբնակչութեան վրայ մի պահնորդ (стражник): Պոլիցիական այդ պահնորդախմբերը կարող են ըստ հարկի պահանջման մի նահանգից միւսը տեղափոխուել ներքին գործոց մինիստրի հրամանով, նահանգի մի գաւառից միւսը—նահանգապետների կարգադրութեամբ և գաւառի զանազան մասերում—գաւառապետի պահանջմամբ: Իւրաքանչիւր տարի գանձարանից բաց է թողուում 10,370,700 ռուբլի պոլիցիական այդ պահնորդների պահպանութեան համար:

Եկատերինօսլաւում, —ինչպէս հաղորդում է «Вѣстн. Юга» լրագիրը, —ստացուած է ներքին գործերի մինիստրութեան շրջաբերականը, որով արգելում են սիոնիստների ամեն տեսակ ժողովները և նուիրատուութիւններ ժողովն ի նպաստ սիոնիզմի նպատակներին:

Յուլիսի 1-ին բացուեց Թիֆլիսում Զանգեզուրի հանքագործ-
ների առաջին ժողովը: Ներկայ էին 16 հոգի: Նախագահում էր
լեռ. ինժեներ Շվաչկին: Քննութեան ենթարկուեցին Զանգե-
զուրի հանքագործների ծրագրի զանազան յօդուածները: Բացի
այդ՝ ժողովը ընտրեց խորհրդի անդամներին և այսպիսով սկիզբ
դրաւ արդիւնագործական այդ նշանաւոր ճիւղի կազմակեր-
պութեան:

Կարգադրութիւններ մամուլի վերաբերմամբ.— «Пра-
вит. Вѣстн.»-ի խօսքերով՝ ներքին գործերի մինիստրի կարգադր-
ութեամբ հեռացրուած էր Ռուսաստանից՝ անգլիական «Times»
լրագրի Պետերբուրգի թղթակից Բրահամ իր մի չարք՝ Ռուսաս-
տանի դէմ գրած թշնամական թղթակցութիւնների համար:

«Восходъ» լրագրին յայտնուած է երկրորդ նախազգուշա-
ցում: «Владимірская Газета» դադարեցրուած է 8 ամսով:
Դադարեցրուած են Ֆինլանդիայում 7 օրով Laatokka և
Aamulehti թերթերը: Նախազգուշացում է յայտնուած «Գանգէ»
թերթին № 76 տպուած «Արջը եւ մրջինանոցը» պատմուածքի
համար:

Յուլիսի 15-ին լրացաւ ուսւս նշանաւոր գրող Վլադիմիր
Գալախտիոնովիչ Կորոլենկօի ծննդեան յիսնամեակը: Նրա
համաքաղաքացի ժողովրդիները առաջուց պատրաստութիւն-
ներ էին տեսել հանդիսաւոր կերպով տօնելու այդ օրը: Ռու-
սաստանի ամեն կողմերից արձագանգ գտաւ այդ մտադրութիւ-
նը. ուղերձներով, հեռագրներով Ռուսաստանի լաւագոյն մասը
յայտնեց իր հիացմունքն ու յարգանքները նշանաւոր գրողին
և հասարակական գործչին:

Կորոլենկօն անյայտ չէ և՛ հայ ընթերցողներին. որքան մեղ
յայտնի է, հայերէն առանձին գրքոյկներով լոյս են տեսել
նրա հետեւալ գրուածքները. «Կոյր Երաժիշտը», «Դատաստանի
օրը», «Գիտնափորի երեխան» և «Ակամայ Մարգասպանը»: Ան-
շուշտ Կորոլենկօի առանձնայատուկ տեղական-ժողովրդական ոճե-
րով հարուստ լեզուն թարգմանութեան մէջ բաւական նսեմա-
նում է, սակայն այնուամենայնիւ զժուար չէ գաղափար կազ-
մել նրա գեղարուեստական պատմուածքների մասին, մանաւանդ
«Ակամայ մարգասպան»-ի թարգմանութեան միջոցով:

Կորոլենկօի հայրը զապորոժեան կազակների տոհմից էր,
մայրը լեհական ծագումից: Կորոլենկօի հայրը խիստ, չիտակ
և շուտ բռնկուող պաշտօնեայ էր. իր այդ յատկութիւնների
պատճառով նա ոչ կարող էր հարստանալ և ոչ կարիք

կազմելու Նա մեռաւ, երբ նրա որդի Վլադիմիրը 15 տարեկան էր, գիմնազիայի հինգերորդ դասարանում: Նրա կինը իր հինգ երեխաներով պէտք է ապրէին չնչին կենսաթոշակով: Այդպիսով ապագայ գրողը իր պատանեկութեան ժամանակում արդէն փորձեց անապահով կեանքի բոլոր դառնութիւնները, 1874 թւականին Վլադիմիր Կորոլենկօն մտնում է Մոսկուայի Պետրոսեան երկրագործական ճեմարանը, սակայն, երկու տարի անց նա արտաքսուած՝ պէտք է աքսորուէր Վոլոգդեան նահանգը, բայց կէս ճանապարհից վերադարձրուեց Կրոնշտադտ իր բնտանիքի մօտ:

1879 թ. „Слово“ ամսագրի 7-րդ գրքում տպւում է նրա առաջին երկը „Эпизоды изъ жизни искателя“, Պետերբուրգում Կորոլենկօն կայանաւորում է և ուղարկում Սիրիւ: Նակուտսկ քաղաքի մօտ նա բնակութիւն է հաստատում և չարունակում իր աշխատակցութիւնը „Слово“ ամսագրում: 1885 թւականին նա թոյլաւութիւն է ստանում ապրել Նիժնիյ-Նովգորոդում: Այդպիսով Կորոլենկօն լաւ ծանօթ է լինում ոչ միայն իր ծննդավայրի—հարաւային-Ռուսաստանի ժողովրդական կեանքի, այլ և հեռուոր Սիրիւի և վերին-Վոլգայի ուրոյն կեանքի հետ: Այդ բոլոր տեղերի կեանքից գրուած նրա պատմուածքների մէջ երևում է ռուսական ինքնատիպ պայմաններում հասարակ ժողովրդից դուրս եկած աչքի բնկնող անհատների ձգտումը խաւարից լոյս, ճշտող անարդարութիւնից դէպի արդարագոյն կենցաղավարութիւն: Այդ գեհնիկ որոնողների ձգտումները երբեմն ստանում են չրջապատող հանգամանքների չնորհիւ այլանշակ ձևես, որոնք աւելի ևս բեկիեֆ կերպով են դուրս բերում իրականութիւնը:

1894 թւականին Կորոլենկօն ճանապարհորդեց և Ամերիկայում, իսկ 1895 թւականից նա Ն. Միխայլովսկու հետ „Русское Богатство“ ամսագրի խմբագիր-հրատարակիչ է:

Կորոլենկօն այնպիսի գրողներից է, որոնք հասարակական կեանքի պայքարից հեռու են մնում. այդ նա ցոյց տուեց 1891—92 թ. իր բուռն մասնակցութեամբ ռուս սովեալներին օգնելու գործում. այդ նա ցոյց տուեց՝ իր սրտին մօտ վերցնելով մի քանի վտակակների դատը, որոնք մեղադրւում էին մարդկային զոհաբերութիւններ կատարելու գործում. «Մուլտանեան գործը» Կորոլենկօի անթառամ դափնիներից մէկն է: Ցանկանք, որ նա իր օրգանում լուրթեամբ չը վերաբերուի և այն իսկական մարդկային զոհաբերութիւններին, որոնք կատարւում են Ռուսաստանից դուրս, եւրոպական և ասիական Թիւրքիայում: Կորոլենկօի կոչը գուցէ ապարդիւն չի անցնիլ:

† Մ. Մ. Փիլիպպով.— Յունիսի 12-ին յանկարծակի վախճանուեց ռուսաց «Научное Обозрение» ամսագրի խմբագիր Փիլիպպովը մօտ 45 տարեկան հասակում։ Հանգուցեալը աչքի էր ընկնում իր հանրագիտական հիմնաւոր կրթութեամբ։ Պետերբուրգի իրաւաբանական և նովորոսսեան Փիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետները չը գոհացրին նրա հանրագիտական ծաւալը, ուստի նա յետոյ դառաւ և հէյդելբերգեան համալսարանի ուսանող, ուր և աւարտեց փիլիսոփայութեան դոկտորի աստիճանով։ Փիլիպպովի գրական գործունէութիւնը սկսւում է դեռ 1881 թւականից—նա գրում էր բնագիտութեան, մաթեմատիկայի, լոգիկայի, հոգեբանութեան, քաղաքական տնտեսութեան, սոցիալոգիայի հարցերի մասին, իսկ երբ 1894 թ. աջողուեց սեփական օրգան ունենալ, չափ գրում էր նաև կրթիտիկական և հրապարակախօսական յօդուածներ։ Իր հասարակական-տնտեսական աշխարհայեցողութեամբ Փիլիպպովը մարկսիստական էր։ Վերջերում նա աշխատում էր հաւաքական աշխատակցութիւնը—կոյնեկտիւիզմը հաշտեցնել ինդիւիդուալիզմի—անհատական անկախութեան հետ։ Փիլիպպովը գիտական փորձերի զոհ դառաւ. նա ձգտում էր գտնել միջոցներ հեռու տարածութեան վրայ էլեկտրականութեամբ հաղորդելու պայթուածների ալիքները։ Նա կարծում էր, թէ հնարաւոր կը լինի պայթուածները հաղորդել՝ օրինակ՝ Պետերբուրգից Պոլիս։ Այն ժամանակ անհնարին կը դասնար պատերազմը, և երկրիս վրայ կը ծաղկէր մշտնջենական խաղաղութիւն, ազգերի եղբայրութիւն, մարդկանց իրաւունքների իրական հաւասարութիւն։ Հանգիստ ոսկորներիդ, ազնիւ ուտոպիստ։